ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

13.05.2019թ.
Ժամը 11[00]

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ ԿՇ և ՁԲ վարչության պետի տեղակալ Ա.Մուրադյանը,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ԿՇ և ՁԲՎ ՁԲՖԿ ծառայության պետ Ա. Պապյանը,
ՀՀ ՊՆ ԿՇ և ՁԲՎ ՁԲՖ ՇԲ առաջատար մասնագետ Ա. Սաֆարյանը,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետի պաշտոնակատար Ա. Սահակյանը:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/2» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.
(Ա. Սահակյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/2» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/2» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
(Ա. Սահակյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար **ջեռուցման կայանների վերանորոգման և տեխնիկական սպասարկման աշխատանքների** ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/2» ծածկագրով մրցույթին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակիցների անվանումը
1	«Անդրեաս և ընկերներ» ՓԲԸ
2	«Արալալաստ» ՍՊԸ
3	«Թիվ 1 Շինվարչություն» ԲԲԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/2» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ մրցույթի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
(Ա. Սահակյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:
2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերն առկա են:
2.3 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/2» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
(Ա. Սահակյան)

3.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/2» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

ՀՀ դրամ

Հ/հ	Աշխատանքի անվանումը	Նախահաշվային գինը (միավորի գների հանրագումարը)	Մասնակիցների անվանումը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	Տանիքների վերանորոգման աշխատանքներ	4,783,979	«Անդրեաս և ընկերներ» ՓԲԸ	79,170,000	15,834,000	95,004,000
			«Արալպլաստ» ՍՊԸ	2,735,000	547,000	3,282,000
			«Թիվ 1 Շինվարչություն» ԲԲԸ	3,597,500	719,500	4,317,000

Ներկայացված են սույն ընթացակարգի հրավերով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված աշխատանքների (առանձին տողերի) համար մասնակիցների կողմից առաջարկվող միավորի գների հանրագումարի արդյունքում ստացվող թվերը:

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը (հայտերով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը), ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են (ճիշտ են):

3.3 Գների նվազեցման նպատակով բանակցություններ չեն վարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/2» ծածկագրով բաց մրցույթի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Ա. Սահակյան)

4.1 Հայտերի բացման նիստի ավարտի օրը՝ 20.05.2019թ.-ին էլեկտրոնային գնահատման արդյունքում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/2» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա 1-ին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվեց «Արալպլաստ» ՍՊԸ-ն: Բավարար գնահատված մյուս մասնակիցները ճանաչվեցին հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ՝ ըստ ներկայացրած գնային առաջարկների շահավետության:

4.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց հրապարակել հայտերի բացման նիստի արդյունքները և առաջին տեղն զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/2» ծածկագրով բաց մրցույթի հրավերի 2-րդ մասի (բաց մրցույթի հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

4.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց էլեկտրոնային փոստի միջոցով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև սույն ընթացակարգի հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

(Ա. Սահակյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Սահակյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/2» ծածկագրով բաց մրցույթի հաջորդ նիստն անցկացնել ոչ ուշ, քան 1-ին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվելիք՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը, ժամը 11:00-ն, ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում՝ ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Ա. Մուրադյան

Գնահատող Ա. Պապյան

Գնահատող Ա. Սաֆարյան

Գնումները համակարգող Ա. Սահակյան